Հայտատուի պարտավորությունները

- Ներկայացնել սերտիֆիկացման հայտեր՝ ՍՄ-ի սերտիֆիկացման ոլորտին համապատասխան:
- Կատարել սերտիֆիկացման պահանջները, այդ թվում՝ համապատասխան փոփոխությունների իրականացումը, երբ դրանք պահանջվում են ՍՄ-ի կողմից:
- Եթե սերտիֆիկացումը վերաբերում է գործող արտադրությանը, ապա սերտիֆիկացված արտադրանքը շարունակաբար համապատասխանի արտադրանքին ներկայացվող պահանջներին:
- Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝

1) գնահատման և հսկողության (եթե պահանջվում է) իրականացման համար, այդ թվում՝ ուսումնասիրության համար փաստաթղթերի և գրառումների տրամադրումը, և համապատասխան սարքավորումների, տեղանքի(ների), տարածքի(ների), անձնակազմի և հայտատուի ենթակապալառուների ուսումնասիրության մատչելիության ապահովումը,

2) գանգատների հետաքննության համար,

3) դիտորդների մասնակցության համար, եթե կիրառելի է:

- Չօգտագործել արտադրանքն այնպես, ինչը կարող է հեղինակազրկել ՍՄ-ին և չանել որևէ հայտարարություն իր արտադրանքի սերտիֆիկացման մասին, որը ՍՄ-ն կարող է համարել մոլորեցնող կամ չթույլատրված:
- Սերտիֆիկացումը կասեցվելու, չեղյալ ճանաչվելու կամ դադարեցվելու դեպքում՝ դադարեցնել բոլոր տեսակի գովազդային նյութերի օգտագործումը, որոնք պարունակում են որևէ հղում այդ մասին և ձեռնարկել սերտիֆիկացման սխեմայով պահանջվող գործողությունները (օրինակ, սերտիֆիկացման փաստաթղթերը վերադարձնելը) և սահմանված այլ միջոցառումները:
- Եթե հայտատուն սերտիֆիկացման փաստաթղթերի պատճենները տրամադրում է ուրիշներին, ապա այդ փաստաթղթերը պետք է կրկնօրինակվեն ամբողջությամբ կամ ինչպես սահմանված է սերտիֆիկացման սխեմայով:
- Իր արտադրանքի սերտիֆիկացումը լրատվամիջոցների հետ հաղորդակցության միջոցներում վկայակոչելիս, ինչպիսիք են՝ փաստաթղթերը, բրոշյուրները կամ

գովազդումը, համապատասխանել ՍՄ-ի կամ սերտիֆիկացման սխեմայով սահմանված պահանջներին:

- Համապատասխանել սերտիֆիկացման սխեմայով սահմանված համապատասխանության նշանների օգտագործմանը և արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությանը ներկայացվող բոլոր պահանջներին:
- Պահպանել իրեն հայտնի դարձած սերտիֆիկացման պահանջներին համապատասխանության վերաբերյալ բոլոր գանգատների գրառումները և ՍՄ-ի պահանջի դեպքում տրամադրի դրանք, և

1) ձեռնարկել համապատասխան գործողություններ՝ նման գանգատների և սերտիֆիկացման պահանջներին համապատասխանության վրա ազդող արտադրանքի հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ,

2) փաստաթղթավորել ձեռնարկված գործողությունները:

- Անհապաղ տեղեկացնել ՍՄ ին այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել սերտիֆիկացման պահանջներին համապատասխանելու իր կարողության վրա:

«ԱՐԹԼԱԲ» ՍՊԸ Տնօրեն Գ. Էսարտիրոսյան

Արտադրանքի սերտիֆիկացման
մարմնի ղեկավար Ա. Դալլաքյան